

ԱրմաՆտ

Արտակ Արք. Մանուկեանի
գրական վաստակը^ը
(բռուցիկ ակնարկ)

8(092)
Ch-91

ԱՐՄԱՆՏ



ԱՐՄԱՆՏ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՀՀ 2559
470

Արտակ Արք. Մանուկեանի
գրական վաստակը

(բուոցիկ ակնարկ)



ՅԱԿԱՐԴԱՆԱԿԱՐԱ
ԲԻBLIOTEGA
ԵՎՐՈՊԱՅԻ ԱՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅ ՅՈՒՆԵՍԿՕ-ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՅԱԿԱՐԴԱՆԱԿԱՐԱ

ԲԻBLIOTEGA

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅ ՅՈՒՆԵՍԿՕ-ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1983

Ինչպէս մեր ընթերցողները զիտեն, թեմիս Առաջնորդ Տ. Արտօնակ Մ. Արք. Մանուկեանը, առաջնորդի իր պատասխանատու պաշտօնին կից, ովը վարել եւ վարուած է ձեռնաւորէն, որպէս բերտն գրչի մարդ՝ հեղինակն է բազմաթիւ դրֆեր և պաշտօնուած ունի մտքի եւ ոզու ատեղծապործութիւնների հանդէալ:

Մենք այսուեղ պիտի փորձենք այդ գործերի մասին մի ընդհանուր զարդարական տակ նորանց, ովքեր զերեւածանօթ չեն դրանց, որոնք պարզիւակում են կրօնաբարոյազիտաւկան, Հայութակագիտաւկան եւ աւանդական նիւթեր ինչպէս նաև գրական գործեր, գրքնած սահուն, պատկերաւոր ոնոր եւ պարզ ու համականըլի շեղուով ու մեկնամքանութեամբ:

Երբ նկատի ենք առնում մեր եկեղեցական դասական ծիսակատասրութիւնը եւ զբարարուի կանուգուող պատարագը, էլ առելի է զգացւում թուրքին՝ մատչեցի լեզուով ու պարզ բացառութեամբ, Աստւածաշնչի բռվանդաբարութեան եւ հայ եկեղեցու ծիսակատարութեան վերաբերութեան նիւթեղին ծանօթացներու կարիքը:

Գիտակցելով սոյն խնդրի կորեւորութիւնը, Արքականը, իր աշխատասիրութիւններով, մեր ժողո-

ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ

Տիկին ՊԱՅՄԱՆ ՄԻՐԶԱՅԵԱՆԻ,
Ի ՅԵՇԱՑՈՒ ԻՐ ԶԱԿԱԿԻ
ԳՐԻԳՈՐ ՄԻՐԶԱՅԵԱՆԻ

վրդի բայն խռուելին ծանօթացնում է Աստածաշըն չի խորին խորհրդի եւ անդաւ գանձի հետ, եւ չօտպի՞մ է շուս կենուական կրօնա - բարտյազիստական խնդիրներ, որմնը առաջնում են մարդու, յաներապէս հայ մարդու առօրեայ կեանքին: Ընթերցողը, «վ որ էլ յինի նա, չի կարող տնօտարքեր մնալ նրա խորհրդածութիւնների հանդէպ եւ ինքն էլ չընկնի խորհրդածութիւնների զիրկր: Նա իր գրւածքներում չի բառարարում մխայն պատմելով, այլ մեկնաբանում, որսով արանում, պատճուռաբանում եւ եղբարկացնում է իր ասելիքը:

Նա քարդ հեղինակի, է ներքոյիշեալ 14 անուն գրքերը, եւ շարանակում է իր առեղծաքրորդական աշխատանքը՝ նորմաննելի նորդիչամբ ու եռամենով. —

Կ ր օ ն ի դասագրեեր, իօսէ ժողովրդին, Աւտարանի շնչով, Հաւատէի հարցը արդի ընկերութեան մէջ, Ապրիլ 24, Աստածաշունչ մատեանը, Հայ եկեղեցու տօնիքը (նոյնը՝ պարսկ.), Լոյս եւ սուեր, Կենցաղագիտական խորհուրդներ, Զուրք կրօնական ծիսականարութեան մէջ, Վերանորբումի հարցը համբային եւ մշակութային կեանքի մէջ, Արեւ գիշերան մէջ, Լուսաւոր համբաներ, եւ Ճառագայթը լերան վրայ:

Մրգագոն հայրը չի մոռացել նպաւ մեր մանկներին. նրանց կրօնական, ազգային, Հայքինասիրական գաստիւրակութեան կարեւորութիւնը: Գունատիպ նկարներով իր զեղատիպ կրօնի դասագրեերը ը գրաւած մանուկների համար, կազմւած ու հիմնւած են մանկավարժական օրէնքների պըրայ: Գրքերը գրւած լինելով շատ պարզ ու մասշելի լիզում ու իրազւած հրապարափիչ մեռվ, առանց ձանձրացնելու, մատաղ սերնդին ծանօթացնում են կը

բօնական տարրական դիտելիքների հետ ու նաև առ լիս նրան խրատական ու հայրենասիրական դասեր:

Իր առաջնորդութեան պաշտօնելի անցնելուց մի տարի անց, 1961 թագիւնին, Հաստարակում է «հոսք ժողովրդին» իր առաջին գրքովկը, «բանդում իր հիացմունքն է յայտնում մեր գաղոթում իշխող համերաշխութեան գումարին որպէս մի մեծ առաքինութիւն», «վասոք առաջին բարձրակալին այդ օրհնանքի համար: Կարեւովութեամբ նշում է եկեղեցու եւ դպրոցի զերբ արգապահպաննան գործում, եւ թէ ինչպէս Պատառքի շրջանին, հայ եկեղեցին դարձաւ ազգային եւ երգեց չանջաւուց ազգից - այլ խօսքով՝ «Ազգն է եկեղեցին պայծառապաշնողը», առաջ է նաև, «Փնչապէս նաև հովիւ, առաջնորդ եւ հովապէտ բնարողը»:

Աւշագրամ է մեր եկեղեցու Առաքելականութեան մասին արած իր հաստատումը եւ այն տեսակէտը որ՝ «յետին նպատակներ վնասուղներ են եղել նրանք, ովքեց լուսաւորչական եւ Գրիգորեան են յորդորջիւ մեր եկեղեցին, մինչդեռ, Ս. Թաղէտա եւ Բարթուղիմէոս առաքեաները եղել են Հայտատան Աշխարհի տուածին բւժին բարձրին բարձրին սովորութիւնները, որոնցից յետոյ քրիստոնէութիւնը շարունակեց զաղտնի քաղոզւել Հայտատանում, մինչեւ Ս. Գրիգոր լուսաւորի չը, «թը առաքեաների ցանած սերմերի վրայ միայն, կառուցեց հայ եկեղեցին եւ լուսաւորչի գեր կատարեց»:

Հետեւարագ, մեր եկեղեցին կոչում է «թէ իւստարչական», այլ՝ Հայտատանայց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Նւիրապետական աթոռները

“չնչով չեն խախտանեաց և կեղեցու միտանական” լիրիւնը, հաւատում է նա, եւ յատուկ պաշտամ ունըսպէ է խօսում էջմիածնի մասին՝ «բողէս ԱՄԱՅՐ երկրում բարձրացած հնագարեան մի կեն տրրոն եւ մի հայրենիք՝ մեր Հոգում», և երկու կափողիոսութիւնները նկատում է իրարու լրացուցիչ՝ ազգուին, եկեղեցական եւ մշակութային զետոնի վրայ: Ցաւով է յիշում, «որ ԹԵՇՐԱՆՈՒՄ մէկ եկեղեցի ունենք եւ յոյս է յայտնում, որ մօս ապառային կը կառուցւն այլ եկեղեցիններ, մի բան, «ըստինչ պէս տեսանք, իրականացաւ իր ջանքերի եւ մեր բարերաների օգնութեան չնորհիւ:

Մեր հայ երիտասարդ, ուսանողութեան ուշադրութեանն է յանձնում հայոց խաչական գառանթացքների կարեւորութիւնը, որպէսովի շհամարեն այն «անցեալի փոշինների տակից դպրա բերած եւ պատմութեան անցանը մի ժողովրդի մշակոյթ»: «Հայոցի տական ամբողջը մի պերճանք չէ» ասում է նա, «այլ մէկ պատուհան, որտեղից պիտի բացւի ունենարեան մշակոյթը եւ մեր առեղծադործ հայրերի գործունէութիւնը»:

«Աւտարանի Շունչով» վերնադրւած իր աշխատութիւնը, Ա. Գրքից ներշնչած խորհրդածութիւններ են, «որ առջնուում են իւրաքանչիւր մարդու առօրեայ կենաքին: Սրբազնը, գրքի յառաջարանում հաստատում է, որ ներկային, հակառակ արևետու

եւ գիտութեանը, յառաջադիմութեան եւ նիւթապաշտութեան ծառական է կրօնական զգուցումը, եւ նոյնիսկ կրօնուց բաժանւածներն իրենց կապը լինութիւնականութէս չեն խցել նրանից: Գորքում, Աւետարանի պատգամների մէկնարանութիւնը՝ տրամած շատ պարզ եւ անպահոյն լեզով, ինչպէս եւ կրօնարարույագիտական խորհրդածութիւնները, կարգացումն են համարական ըստինչութեամբ: Համակում են ընթերցողի Հոգին սպնին գրացումներուի եւ առաքելուութեամբ:

«Ապրիլ 24» խորագրեալ գրքում, որ հրատարակել է Բիւրաւոր Նահատակների 50-ամեակի առթիւ, Սրբազնը անդրագանալով այդ ահաւոր բարբարոսութեան պատմականին եւ նրա պատճառած նիւթական եւ բարյական ահռելի մնաններին, եղբակացնում է. — «Զոհածների արիւնը պիտի շարունակի պղպջալ մինչեւ այն ժամանակ, երբ ամբողջական բարարարութիւն եւ հասուցում ստանանք: Նախ հասուցում, յետոյ ներում»: Հաւատացած է, որ «Անպայմանորէն մի օր մենք Արքարատին կը նայենք ոչ թէ նայելու եւ անցնելու համար, այլ այնուեղ մընալու, մեր պատմական հողերի ամբողջութիւնը հընդուագիտին ըմբոշինելու եւ հայկական գրուը պարզելու համար: Նոր Արքարատ, նոր տառան, մէկ միլիոն ու կէս հայերի արեամբ թաթաւուն»:

«Հաւատոքի Հարցը Արդի Ընկերութեան Մէջ» իր գրքում, Սրբազնը շօշապիւմ է կրօնի ուսուցման, աներէւոյիթը եւ նրա գործութեան, այլ խօսքով Աստրծոյ գաղափարի ըմբռշինելու հայկական գրուը պարզելու համար: Նոր Արքարատ, նոր տառան, մէկ միլիոն ու

դիրները՝ արոբի ընկերութեան մէջ եւ առելացնում «ը՝ «Պէտք է յառակ միտք ունենալ հասկանալու համար անեղնոյթը եւ նրա գորութիւնը»։ Հաւատքը, ըստ հեղինակի, մի հոգեպահակ է, ապրում է, եւ Աստծոյ դաշտավարից դուրս հաւատքի հշորիս ըմբռնում եւ հասկացողութիւն չկայ։

Ակնարկիելով քիչ թէ շատ ընդհանրացած այն տեսակէտին, թէ՝ կրօնը խղճի հարց է, կարեւորութեամբ շնչառում է, որ այդ դէպքում պէտք է հարց տալ, թէ «Ի՞նչ է խիզնը. չպիտի հարցը անորոշ վիճակի մէջ մնայ, եւ ոչ էլ առիթ տայ անհատուածութիւնը քարոզելու։ Կրօնը խղճի հարց նկատել, երբեք չի նշանակում թէ, անկրօն եւ անհաւատ քաշաքացիներ պիտի պատրաստեն», յայտարարում է նաև։ Ի վերջոյ, «Հոգի առաւել է քան զմարժին»։ Քանի որ մարդը ունի ազնիւ զգացումներ, ինչպէս հայրենակորութիւն, գաւակի սէր, ծնողի սէր, կրօնաստիրութիւն եւ այլն, ի գուր են որեւէ ջանք արմատախիլ անելու համար այդ զգացումները մարդկանց հոգուց։ Եւ քանի որ հաւատքը եւ նրա գոյութիւնը արժէ քաւորւում է։ մարդով ու իր կեսնքով, եւ առանձին մի իրողութիւն չէ, ուստի «ինչ չքան էլ արդիական ինին ներկայ դարը, յանձին իր բարդաթիւն նւազումների եւ յառաջադիմութիւնների», չնշում է Սրբազնութ, «Աւետարանը կը քարտուի եւ կրօնը կը շարունակի իր փրկարար գերը կառարել ժողովրդի հոգում եւ այս համունքի դաստիարակութեան եւ նկարագրի կերտման դրծում, քանզի հաւատքը եւ արդիականութիւնը երբեք իրար հակառակութ երեւյթներ չեն. ընդհակառակն, կրօնն էլ, նոր պայմաններում, յեղաշրջող


ընկերութեան մէջ, միջոցների մասին է մտածում իրեն վիճակած պաշտօնը լաւագոյնա կատարելու համար», եզրակացնում է նա։

«Աստւածաշունչ Մատուանը», պատկերագրող հրատարակութեամբ իր գիրքը, «ք լ՛յս է ընծայեկ 1966 թւականին Աստւածաշնչի հայրէին առաջին տըպագութեան 300-ամեակի առթիւ, նոիրուած է «Գրուքի Գրքի», այլ իոռքով՝ Ս. Գրքի ուսումնասիրութեանը։

Գիրքը սկսում է Սրբոց Թարգմանէչաց շաբանկանով եւ նրան յաջորդող Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի եւ թարգմանիչ վարդապետների նկարնելով։ Կան նաև ձեռագրերի եւ տարբեր բնույթների նմոյշներ, զարդարանողակի կազմերի, ինչպէս նաև Աւետարանի անսանաթերթերի եւ տիտղոսաթերթերի նկարներ։

Գրքում տրումծ են Աստւածաշնչի բաժմանումներն «ւ գաատութումը, ձեռագրերի, բնագրերի, Աստւածաւածութիւնը հետինակների ներշնչման աղբիւրի եւ գրքերի կանոնականացման մասին, ինչպէս նաև թարգմանութիւնների եւ բանագալակութեան եւ Աւետարանի առաջնորդութիւնը ուղարկողի՝ Ուկրան Վարդապետի մասին հաստաքրքրական, բազմատրութիւններ եւ տեղեկութիւններ»։

Այս ընդպարձակ նիւթի ուսումնասիրութիւնը Սրբազն Հայրը յաջողել է տալ ընդգրիող ձեւով ընդումենը 178 էջերի մէջ։ Ընթերցողը լրիւ գաղափար է կաղմում Աստւածաշնչի իւրաքանչիւր գրքի բոյման դակութեան եւ Հին ու Նոր Կտակարանի կազմութեան



Ժամին:

Սրբությանի «Աստվածաշաւունչ Մատենալը» եւ «Կենցաղականական Հարցեր» հատորները, այն գլուխիրից են, որ արժէ մարդ միշտ ունենալ իր զրատաղանի վրայ:

Լրիս գաղափար կազմելու համար մեր եկեղեցու տօների նշանակութեան եւ խորհրդի մասին, պէտք է անպարհան կարդալ Սրբության Հօր «Հայ Եկեղեցու Տօնիրը» հատաքրթքական աշխատառափրութիւննը, որը, յառկապէս, հաւատացեալ ընթերցողի մէջ մէծ տէր է, հետաքրթութիւն է ստեղծուած մեր եկեղեցու ծէսերի, արարողութիւնների, տօների իմաստի եւ նպատակի հռնդէպ:

Սոյն գժւար աշխատասիրութեան համար հեղինակը օգտւել է հայ եւ ասմար բազմաթիւ աղքիւրներից, ինչպէս նաև ուսումնասիրնել է տօների հետ առնչուող ժողովագլան սովորայթները եւ հեթանոսական շրջանից մնացած աւանդութիւնները եւ համագրբել այդ բոլորը, աւելի մատչելի զարձնելու համար ժողովրդին:

Այս աշխատասիրութիւնը հրատարակւել է նաև պարսկերէնով, բաւարարելու համար պարսիկ լրագրողների, ուսումնասիրողների եւ արևետագէտների, ինչպէս նաև պարսիկ ճայնացիրի եւ հեռատեսիլի պաշտօնեաների հետաքրթութիւննը, որոնք ժամանակին դիմել եւ տեղեկութիւններ էին ուզել մեր տօների մասին: «Ծնազիս իրանցուը, ինչպէս եւ պարսիկ մամուլը, ժամանակին դրւատանքով անդրադարձան այդ զբքի մասին, գոնելով այն օգտակար եւ

Հետաքրքրական:

Իր «Լոյս եւ Ստուեր» խորագրեալ 148 էջերից բաղկացած շքեղ հրատարակութիւնը պատրունակցւած է 34 զլուխներ, «ուր չօշափում է կենաւական ինդիքներ, մեզ յուզով ամենօրեայ բարոյագիտական», կրօնական, ընկերային, ազգային-և այրենամիջական հարցեր՝ պարզ, սահուն եւ պատկերաւոր ոճով:

Յիշտատակութեան արժանի են «Ժամանակը», «Ներկայացող ասկիթը» եւ «Ակնթարթը» միջատառութեամբ դլուխները:

«Ժամանակի հետ» գլխում, ժամանակի հետ քայլելու, նրա ոգին ըմբռնելու հետ համաձայն լինելով հանդերձ եւ տրամաբանական գոնելով այս, Սըր բազանը յարում է, որ այդ «Լիճնակը առաւելաբար կայանամ է արտաքին, թեթև եւ յարափոփոխ երեւոյթների մէջ եւ զուրկ է մարդուն մնայուն Հ"Գեկան եւ մասային սնունդ տարու յատկութիւնից»: Ռաստի եւ զարմանալի եւ անքնական չի գտնում մեր օքերում պատանութեան եւ երիտասարդների տարւելը այդ յարափոփոխ երեւոյթներից եւ կայուն նկարագիր եւ հատուառ համագումանը շունենալը: Անկարս այդ քուրփա, սակայն, Սըրազանը ակնկալում է, որ մեր նոր սերունդը ժամանակի հետ քայլելով հանդերձ, անվերապահ յարգանք ունենայ «մեր նորդական արբութիւն ների, ազգային դաղափարների եւ մարդկային բարոյական ըմբռնամների հիմնական սկզբունքների նըլկատմամբ»:

«Անբաւելին», «Խաչին Վրայ Առանձին» եւ «Արեւագալ» զլուխները արժանի են յատուկ ուշադրութեան: Առաւածողութեան մասին,

այլ խօսքով՝ Բանի մարմին առնելը, միաւորումը մարմնի հետ, Յիսուսի Ծննդեան եւ Յարութեան վաւերականութիւնը, եւ յատկապէս «Արեւագալ» գրլիսի տակ, խորհ ապրումներով արած իր խորհրդածութիւնները, միտիկ, սքանչելի արձակ քնարեք գութիւն կարելի է համարել մեր հոգեւոր գրականութեան մէջ:

Խօսքը տաճնք հեղինակին. —

«Արեւագալ. լոյսի ներբող կայ:

«Քանի՞ դարեր, զատարկ սափորներ այսպէս հանդարս բարձրացան լեցւելու համար լոյսով, եւ քանինե՞ր իջան դարձեալ դատարկ: Յիշը. Լուսաւորիչ, Սահակ եւ Մեսրոպ, Նարեկացի, Շնորհալի եւ ուրիշներ իրենց կեանքի տեւողութեան ընթացքին լից ւեցան այդ լոյսով: Հոգիներու հրճւանքի պահն է: Թերեւս նրա տեսողութիւնը վայրկեան մըն է միայն: Զայն ունենալու ձգտումը եւս հրճւանքի պահ մըն է:

«Արեւագալ. լոյսի ինդիքնը կայ»:

Լոյսի եւ բարութեաց գովիճրզու եւ նրանց սիրով ապրող հեղինակի, համարեալ իր բուլոր խորհըրդածութիւններում տարւում ու առաջնորդում է իր ընթերցողին, իր ժողովրդին դէպի «աղբիւրը լոյսի», դէպի բարութիւն, որի պակասից տառապում է ողջ մարդկութիւնը:

Սըրազան Հայրը անհուն սէր եւ պաշտամունք ունի նաեւ այն ամեն ինչի նկատմամբ, «ո հայկական է, «ո կապ ունի մեր երկրին, դատին, մշակոյթին, սրբութիւններին, աւտուղութիւններին: Անհրաժեշտ է գտնում «հայրենի բոյրով, հայկական մասն -

գով իրցնել միտքը անցեալի եւ ներկայի միջեւ հոգեւոր ու մշակութային կազը ամբացնելու համար»:

Կարող ենք ինքնառողջ, գրական մի գիտութամարել նրա «Հոդին Մխիթարյանը իւրի» վերնագրւած գլուխը: Սրբազնուր նկարագրում է այն խայտահղը, ուրախութեւնը եւ ծիծաղը, «ո նա հաւատում է սանդի է ունենում հողի բնդերքում ամեն սպամ, երբ մի գաղտող է իշխում նրա գիրկը... «Բանդի», ասում է նա, «իրմէ առնեածը և զացածը, իրմէ փրցւած մասնիկ մը, գործեալ իրեն կը վերազառնայ, եւ մինչ այդ պահուստ ամեն մարդ բացի եւ յուգումի մէջ է, հողը հրճւում, «որախօնում ու մխիթարում է ինքինը կտած ըլլալու երջանկութեամբ»:

Գիտի անպայման կարդալ նրա «Ստերներ» վերնագրւած փիլիսոփայական գրւածքը՝ բանատուղծութեամբ թաթառւուն: Այսուեղ մարդկանց նմանեցնում է սրբեղերքում տարածւած սուերների, «ըսնք, անվախճաշ, լոյսի հովանաւորութեան տակ ուղում են նւաճել տիեզերքի գաղտնիքները: Սակայն, մարդ տուերը, իր բոլոր նւաճմանները, գիտութեամբ եւ ստեղծագործութեամբ հանգերծ, Մեծ լոյսի դիմաց եւ համեմատութեամբ, պիտի մնայ որպէս լուսաւում ամ փրբիկ սուեր:

Խօսքը տանք Սրբազնան Հօրք, «ո եզրապեամբում է իր բանատուղծական, տիսւր, սակայն խմատուն խորհրդածութիւնը, հետեւեալ պարբերութեամբ»:-

«Պիտի քալեն սուերներն ամբողջ, կեանքը ապրած ըլլալու երջանկութեամբ, առաջորդւած ամեն տեսակի մթութիւն փառատող յաւիտենական լոյսին ժայթ բումներէն: Անոնք պիտի ձգտին լեցնելու հա-

մար իրենց որարասուպ սափոքները եւ սակայն, միշտ ալ պիտի մնան անկառուար: Պիտի հասնին բարձումքներու՝ այլազան տեսակին նամանումներու, լողմէջն, եւ սակայն միշտ ալ պիտի մնան սուեր, առաւել եւ նւազ չափով սուեղծագործ կամ ամուլ: Թերեւս օր մը իրենց ափերու մէջ ունենան տիեզերքի ամբողջ գաղտնիքները, եւ սակայն միշտ ալ պիտի մնան լուսաւուրած փրբիկ սուերներ յարագերաբար այն մեծ լոյտին, «որուն չնոթիւ կը լուսաւուրաբն սուերները»:

Որպէս երջանիկ կեանքի ուղեցոյց, Սրբազնի գրւած քնները հրմակում են իրար՝ բարյագիտական սկզբունքների մեջնարանութեամբ եւ հոգեւոր խորհրդածութիւններով: «Ինչ որ խնայեցինք, կարսն ցուցինք, ինչ որ տիեն՝ շահեցանք» խորագիր տակ իր գրածքը, «բանդ ընտրել է հետեւեալ բնաբաննը:-

Ինչ որ տիենք, միշտ ունինք,

ինչ որ ծախսեցինք, ունինք,

ինչ որ խնայեցինք, կարսնցուցինք,

մեզ յիշեցնում է բանատեղ վահան թէքէեանի «Հաւելարպար» քերթածը, «բանդ նա շաւոնաբարաբ ներշնչած նոյն բնաբանից, ասում է.

«Հաւելարպար, ինչ մնաց, կեանքեն ինծի, ինչ մնաց,

ինչ որ տի ուրիշին, տարօրինակ-

այն միայն...»:

Այս, երանելի են իրաք նրանք, «բոնք, ըստ Սրբազնի բարերարութեամբ հմայք են սուեղծամբ իրենց անան չուրչ ու անմահացնուամ իրենց լիշտակը: Քանզի մնայուն այն է, «ո տալիս ես, այլողէս՝ պրահածը, ինայտածը հաւասար է կ'ըստի:



«Ավր Լայն Բանալ» գլխի տառկ, Սրբագանցը անուրաժեշտ է կտնում մեր բոլոր հասարակական, մը շակութային, ազգային գործերում, հանդուրժողական նութեամբ եւ փոխադարձ հասկացողութեամբ եւ մըստարհութեամբ, ափի լայն բացել, համախմբելու համար բալոր նրանց, ավելի կարողութիւն «ւեն իրենց մասնակցութեամբ օժանդակելու եւ պատստախանաւարութիւն յանձնելու՝ անկախ նրանից, թէ ինչ մտայնութեան կամ զաղափարի տէր են նրանք: «Կարկինը ընդուրակելը», ասում է նա, «արժանիքը եղածին պէս տեսնել, ամբողջը առնել բացւած ափին մէջ ու յետոյ սրբել, մաքրել եւ ըստ կ'ործի պատել արժանաւորի: Այս է իրաւ ու ճշմարիտ աղբափարութեան և աղբափային ծառայաթեան ճանապարհը»:

Իր «Լոյս եւ Սուեր» գրքից, առանց դժւարութեան չէր, «բ կատարեցինք այսուեղ ներկայացրած դրոխների ընտրութիւնը: Նոյնը պիտի առնենք իր «Լուսաւը ձամբաներ» գրքի գէպքում, քանզի այդ գրքերում չօշտիած նկելթերը եւ արաւած խորհրդածոթիւնները այնքան կենաւկան եւ հետաքրքրական են, «որ չեն զիջում միմեանց: Աւտոի, մեր խօսքը երկարացնելու մեղքը սիրով յանձն առնելով, պիտի ներկայացնենք նաև իր «Սկիհը» վերատառութեամբ գրածքից մի հատած, «ըստէս վերջին նմոյշը իր «Լոյս եւ Սուեր» գրքից: «Սկիհը» խորը հաւատքով ու ապրումով գրաւծ միստիկ արձակ բանաստեղծութիւն է՝ ըստ մեղ, ամեն մի բառը խորհրդաւորութեամբ յագնեցւած:

«Առաջին անգամ ձեռքերուու մէջ բարձրացար, երբ նորմծայ արեգայ, աղօթքի մէջ աղօթք դարձած,

անձրանիկ պատարագս կը մատուցանէի: Այդ ժամանակ, եք առաջին անգամ քեզ կ'առնէի ափելում մէջ եւ սրբագան ու նորբական հաղորդութեամբ, համակ ապրում, ներշնչում ու բանաստեղծութիւն դարձած կը զգայի, թէ քեզմով քեզի խորհուրդ ու իմաստ տած, Մեծ Վարդապետին պատվածն էր որ կուպար դարերու խորքէն, եւ դարելու մշուշին ընդմէջէն կ'ուրած զրծւէր պատկերը հազարներու, «ընք, վատահ եմ, առաջին անգամ քեզ բարձրացուցին նոյն ապրումով, նոյն զգացումով ու նոյն ներշնչումով, եւ քեզ իրենց ձեռքերու մէջ առնելով, անանձնական երջանկութեան գեղեցիկ պահներ ապրեցան: Դարերու ընթացքին, երկիւղած ու ասինքնող տպաւորութեամբ ինչքա՞ն բարձրացար ու պատարագւեցար դուն, «ու աղաչական աշքեր քեզի նայեցան, միիթարութեան ու անդորրութեան կարօտ հոգիներ քեզի բացւեցան, «որուն իջար մեղքերով պարաւանգւած հոգիներուն որպէս հաց ու գինի ու դարձար այսուեղ արիւն եւ մարմին»:

«Զուրը կրօնական ծիսակատարութեան մէջ» իր աշխատամիրութիւնը բազկացած է 12 գլուխներից: «Զքին նիկրած աստածներ եւ զրի պաշտամունք», «Զուրը հայկական հաւատալիքների եւ սովորութիւնների մէջ», «Զուրը խորհրդակատարութեան Մաշտոցում», «Զուրը եկեղեցական արարութեանց ընթացքում», «Աղօք եւ ծիսակատարութիւն անձրեւ խընդիւն համար», «Զուրի ու լուսինը», «Լոյսի եւ զրի պաշտամունք», «Կենաց զուրը», «Զուրը մարդկանց մաքրում է իրենց մեղիներից», «Զուրը Ասուածաշրմչի մէջ», «Զուրը կանոնագրքի մէջ»:

Այս հետոաքըքըական աշխատասիրութիւնը,
որն, ըստ հեղինակի՝ ջրի թեմայի ուսումնասիրու-
թեան առաջին փոքրն է, ինքնատիպ մի գործ է իրօք:
Գրուխների խորազրերն ինքնին գաղափար են տալիս
ընտրած թեմայի հարատութեան մասին, որպէս բայն
ու ընդարձակ ուսումնասիրութեան արժանի նիւթ:

Սրբազնը, մեր կրօնական եւ ազգային բազ-
մաշարեան կեանքում ջրի մասին գոյցութիւն ունեցած
աւանդութիւնները, ծէսերը, սովորոյթները եւ տօռ
ները յիշատակելուց բացի, նշում է այն պաշտամուն-
քը եւ սէրն ու հաւատոքը, որ հեթանոս եւ քրիստոնեայ
ժողովուրդները ունեցել են ջրի հանգէալ գոպէս աղ-
րիւրը կեանքի: «Մարդկային պատմութեան հնագոյն
շրջանից սկսած», ասում է Սրբազնը, «Չուրը պաշ-
տել են այլազան խորհրդանշաներով եւ միեւնան
ժամանակ համարել են արդաւաւորութեան, բերքիւ-
թեան եւ հոգեւոր մաքրութեան արտօնքին նշան»:

Մոյն ու սումնասիրութիւնը էլ ամելի է արժէքաւոր-
ւում, երբ նկատի ենք ունենում այս նիւթի առընչու-
թեամբ աղքիւրների համարեալ չըդոյնթիւնը:

«Վերանարոգումի հարցը հանրային եւ մշակու-
թային կեանքի մէջ» իր գործոյկում, որի բովանդակու-
թիւնը նախ՝ «բայս դասախոսութիւնն կարգացւել է
Հ. Հ. Բուրհ. Միութեան մէջ, Սրբագրութեանը անհրաժեշտ
է զանում եւ հրամայական, «ը, առանց խախտելու
հիմնական սկզբունքներն ու աւանդութիւնները, ժա-
մանակի ոգու եւ մատայնութեան տէր թարմ ուժերի մի-
ջոցով արդիսկան հիմունք տալ գործերին եւ այդպի-
սով կանիսել առեղծազործ աշխատանքը խախտող

միապաղապանթիւնն ու լճացումը: Եւ առաջին հեր-
թին նոր սերնդից, համալսարանական երիտասարդու-
թիւնից է սպասում վերանորոգումի այս գաղափարի
գործադրութիւնը:

Ուրախութեամբ պիտի նշել արտեղ, «ը Սրբ -
բազան, Հօր յարտցած այս էական հարցը ունեցաւ իր
օպտակար արձագանգը, որը յանգեց մի սեմինարի
գումարման՝ մատնակցութեամբ տեղիս միութիւննե-
րի եւ կազմակերպութիւնների ներկայացնցիների,
«ընք հանգամ անորէն անդրագաւալով մեր հանրա-
յին-մակութային թմրած վիճակին, արեցին ախտու-
ճանաւումներ եւ ընտրւեց մի յանձնախումբ, որպէս-
զի մշակի մի ծրագիր եւ միութիւնները համազործակ
ցարար գործի անցնեն:

Իր «Լուսաւոր ձամբաներ» գիրքը, բազկացուծ
250 էներից, պարզակում է երեք բաժիններ եւ չոշա-
փում է այլազան հոգեւոր, հայրենասիրագան եւ եկե-
ղեցական հարցեր: Գիրքը սկսում է Ս. Ծննդի նշա-
նակութեան եւ Խորհրդի մասին խորհրդածութեամբ,
«բայս վերանորոգման եւ ինքնանորոգման եւ յեղա-
շըրջման մի հանգրւան, եւ անդրագաւանում է Յիսու-
սի տնօնաւորութեան այն հարցին թէ անկախ Ս.
Դիրային վկայութիւններից, ինչպէս պիտի ընկալի
նա, մեր օրերի բյուսի տակ՝ ժամանակակից մարդու-
կողմից: Հաստատում է իրոք հաւատաքով, «ը, քանի որ
իննդանի է մարդու խիդճը, որպէս մարդկանց խըզն-
մբառնքի վրայ իշխող անձնաւորութիւն, միշտ կին-
դանի է ու կը մնայ նա որպէս «մարդոց կեանքի մտա-
սեւեռումին առանցքը եւ մեծազոյն հեղինակութիւ-

Ակն Քաջի

Ակն Քաջի եւ արեին
Որ հաւաշից ծառաջայրելու.
Ակնին խոչին ու դարաւին
Տիսայ հզկա զուաօթ կ'ըսրէ:

Ա. պահեցի ափեցու մէջ
Կայառ լոյսի հզկա ածայր,
և սիզեցի այնպէն ամօւր,
Որ ձաւուցան իշ հօ. թեան:

Ցից պիտի մարդուս շայր
Կարգրանմ լոյսի վաշին
Իմանալի քայր հաջան:

Ա. փայծեցի մէջը աժառ
Կայառ հոյսի պահուց քայրի,
- շորևուցան արեին պէճ:

Ի՞ր: Շեշտում է աւետարանական պատգամները իրաւուցից դ"րծի վերածելու եւ հոգեւոր գաստիազակութեան անհրաժեշտութիւնը, յատկապէս այս օրեւում, երբ նիւթը իշխում է մարդկանց կեանքին եւ հոգուն եւ երբ «յսնազգնութիւն է պէտք հրապարակաւ խռատվանելու, թէ՝ հաւատում ես Աստծուն»:

Սակայն, անկրախ տիրող այդ բ"լոր տրամադրութիւններից, անդրազաւուալով Սերմնացանի առակին, հաստատում է նա, որ Սերմնացանը, այլ խօսքով՝ Աստածորդին, շարունակում է ցանել իր սերմերը նաև Հայոց Աշխարհում: Խօսքը տանը հեղինակին, որը բանաստեղծօրէն նկարագրում է Աւետարանի սերմի տեղումը Հայաստան Աշխարհի վրայ, արդիւնաւորւելով, մէկի տեղ հարիւրապատիկ ու հաղարապատիկ տալով:-

«Դարձեռու ընթացքին Աստուծոյ պատգամը, Աւետարանական սերմը Եկան նաև Հայոց Աշխարհը: Դարձաւ քայրով զայտ Առաքեաներու միջոցով, դարձու լոյս ու կրօն, Լուսաւորչի ջանքերով, դարձաւ զիր ու շարաւկան, դարձաւ մազաղաթ ու զբականութիւն, դարձաւ մշակոյթ Սահակ Մեստովի ու Թարգմանիչ Վարդապետների տքնախոն, աշխատանքով, դարձաւ արւեստ, դարձաւ երաժշտութիւն ու նկարչութիւն, դարձաւ քանդակ ու երգ՝ Հայ Եկեղեցւոյ կառոյցի մէջ: Դարձաւ աղօթք Նարեկացու բերնին մէջ, դարձաւ շրջուն աղօթք ու շարաւկան՝ Շնորհալի Հայրապետի գրչին տակ ու դարձաւ մանաւանդ Հայ տուն, Հայացած պատգամ ու խօսք Ազգային Եկեղեցւոյ մէջ»:

Եւ այս օրեւում Աստուծոյ պատգամը ընկալելու

համար, հակառակ բոլոր պայմաններին, Սրբազնոր անհրաժեշտ է գտնում բանալ միտքն ու հոգին իր ամբողջ տարողութեամբ, ըմբռնելու և հաւկանալու համար հայօթն ցանւած սերմը:

«Ով որ լսելու ականջ ունի թող լսէ» գլուխ տակ, այդ պատգամը ճիշտ ընկալւելու մտահոգութեամբ, տալիս է հետեւսալ բացատրութիւնը.-

«Թօսեյու արեւստի չափ կարեւոք է նաև լսելու արեւստը. երանի այն հոգիներին, «Դոնք վարժեն լսելու արեւստին, «Պավետնեւ, խօսելու, դատելու հականառելու համար նախ պէտք է լսել, այն առեն է «որ իմաստ կատանան ըստու խօսքերը»;

Սրբազնոր հաւատացած է, «որ այդ պատգամները, «բարէս սերմեր՝ ընկնելով պարարտ հողի մէջ, պիտի տան իրենց քերքը՝ հակառակ ճարտարարեւստական նւաճումների եւ արձանագրւած յառաջադիմութեանց, «Պոնք լցում են մարդու մի՛տքը միայն ու սովոր մատնում մարդկային հոգին... Այս հանգըրւանին է, «որ հեղինակի մտահոգութեան եւ խորհրդածութեան նվաթ է զանուում հին ու նոր սերնդի յարաբերսւթեան եւ հաւեկացողութեան խնդիրը եւ արդի քրիստոնեաց անհատի քրիստոնէական ըմբռնումով տպրելու հարցը: Նա հաւատացած է «որ, օրբ-օրին յառաջացող ընկերույին իեանքում, եկեղեցին եւս պիտի քայլի ժամանակի հետ. նոք ու արուել, գիտակից վկայողների եւ ուսուցիչների միջոցով պիտի մեկ նարսնեն աւետարանսկան եւ քրիստոնէական այն սկզբունքները, «Պոնք կապ ունեն առօրեայ իեանցի հետ եւ առանց այլանդակ մեկնարանութիւններ կատարելու, մարդկանց առաջնորդների դէպի քրիստոնէա-

կան լուսաւոր ուղիներ, և շարունակական փոփոխութիւնների շրջանում ասպրոդ մարդուն հաշտեցնել երկրայինի և երկնայինի հետ եւ նորոգել նրա քրիստոնէական հաւատքը, «Քանզի», եղբակացնում է նա, «Քրիստոնէական ակդրտները ժամանակաւոր տեւողութիւն չունեն, այլ յաւետնական առաքելութեան համար են սահմանաւած»:

Մարդու հմարիտ մեծութիւնը, Սրբազնոր անհաւտի անկեղծ ծառայութեան մէջն է գտնում, «Հոգիի խորին եկած անշահախնդիր կեցւածքի մէջ, մանուկի հոգիի նման մաքուր ու վճխուսիրյոյ»: Իսկ մեր Ազգի մեծութիւնը պահելու համար անհրաժեշտ է գտնում «քայլել և ընթանալ մեր հայրերի նամբռի, նրանց բացած «ւղիներով»:

«Հաւատոր Ճամբաներ»ի այլ գլուխների մէջ Սրբազն Հայրը խորհրդածում է չաըի եւ բարու, խօճի, հաւատքի, «ոմ եւ ինչպէ՞ս հաւատալուն նիւթի ըի եւ հոգուն ներդաշնակութեան կարեւորութեան մասին. հաւատաւում է, «որ մեր եկեղեցու ընկերային վարդապետութիւնը ներդաշնակ է քաղաքական վարդապետութեան հետ: Խօսելով Հայ Եկեղեցու վարչական առողջանայատկութիւնների, նրա ժողովրդավար եւ ազգային ողու մասին, նշում է «որ՝ այն իր ազգային տարապից բացի նաև ունի ժողովրդավար ոգի, ուստի եւ Հայ Եկեղեցին եւ ազգային է եւ ժողովրդավար»:

Նրա «Կենցաղագիւտական Խորհօւրդները մի ուղեցոյց է ամեն մի անհատի համար՝ իր ընկերային եւ յարաբերական կեանքում, սկսած ընտանիքից եւ

բարեկտմակոն շրջանից մինչեւ աշխատանքի վայրը
եւ հասարակական եւ պաշտօնական հիմնարկները,
իռուսկցութեան եւ ընդունելութիւնների ընթացքում:

«Արեւ Գիշերաւան Մէջ» խորագրեալ նրա բանաս
տեղծութիւնների ժողովածուն, որպէս զուտ գրական
գործ, եկաւ փաստելու իր վաւերական ձիրքն ու շնորհը
նաև քերթողութեան արեւտում:

Իր հոգեւորականի կոչման գուգրնթաց, որպէս
հաւատարիմ ժառանգը Մաշտոցի, Նարեկացու եւ
Շնորհալիի, նաև վառ է պահել նրանց փոխանցած
դպրութեան ջանը:

Ինչպէս տեսանք, իր բոլոր հեղինակութիւն -
ներում, խոր ուսումնասիրութեան նիւթ է դարձել բա-
րեպաշտ եւ կատարելու մարդ լինելու դժւարին ողին,
եւ միաժամանակ, «բազէս բանաստեղծ, թափանցում
է մարդու հոգու խորքերը, ուր նորից վճառուում է կա-
տարել մարդը, լոյսն ու բարութիւնը, գեղեցիկն ու
ազնիւը, միաժուկնով այնտեղ իրուն ու զգացումը՝
ինքնատիպ ոճով:

Տաճառատեղծ լինելու համար, ամենից առաջ,
որէաք է Մարդ լինել: «Մարդ» առելով, գլխազիք
մարդն ենք հասկանում ստեղծւած Աստծոյ պատ-
կերի նմանութեամբ. Մարդը, որին փնտուցին Դիոն-
իէսները օրը ցերեկով՝ լումապարը իրենց ձեռքին:
Մարդը, որ իք հոգու խորքից արտացոլող լոյսով վախի
ցընում է չարախինդ ու ածխաղէմ մութը, տանշծում է
ինչ որ վեհ է ու վաեմ, ազնիւ է ու բարի, չքնաղ է ու
գեղեցիկ, արդար է ու ձշմարխութիւն: Մարդը, «թ ներշըն
չում, ցնցում, արթնացնում եւ խարազանում է անդո-

դային եւ անզգամին. չի պարագում ինքն իր դէմ մը-
ղած պայքարում եւ յաղթահարում է իր «եա»-ին եւ
ընուրում է մտմբան նեփումի: 23 տարի, իր եկեղեց-
ական, ազգային-հանրային երախտաշատ գործու-
նէութեան զուգընթաց, Սրբագրանը ունկնդրեց նաև
իր սրտի եւ հոգու ծարյնին, երգեց ազնիւն ու գեղեցի-
կը, լոյսն ու բարութիւնը:

Ինչ խօսք, «ր աշխարհը աւելի բաւ ու խաղաղ
տեղ կը լինէր ապրելու եւ մարդկութիւնը աւելի բախ
առաւոր, եթէ նրանց առաջնորդները, զեկագարները,
նկարադրով ու խառնածքով նաև բանաստեղծներ լին-
էին:

33 գործիկ քերթւածների իր այս ժողովա-
ծուն, որ սկսում է «Առաւու Լուսն» խորագիրը կը-
րող քերթւածով, բնթերցողին պարզում է մեր բա-
նաստեղծի հաւատոյ հանգանակը, ույն է՝ մէջն ու
մշուշը վարատող, չարին ու բարուն անփառիր իր բա-
րիքը բաշխող. կենասպարզեւ բարի լոյսի եւ բարու-
թեան պաշտամունքը, ծարաւը, «ըր գեղեցկօրէն խոր
չըրգանուած է Աստծոն: Խոկ նրան յաջորդող երեք
քերթւածները՝ «Զանգակնիր»ը, «Տունն այն բարին
եւ «Մարմին Տէրունական»ը լրացնուածն միստիցիզմովի
խանցած հոգեւոր մթնոլորտը, որն, ընթերցողին կըս-
րելով նիւթական աշխարհից եւ համակելով նրան իրո-
բախորհուրդ զանգակների զօղանջով, կապում է նը-
րան հայու ողու հիմքը կապմող՝ բանաստեղծի բանե-
րով՝ «Արքագան քարի թեւով ու յաղթապահն խոյան-
քով» Տունն այն բարի-ին, այլ խօսքով՝ հայկական ե-
կեղեցուն: Թերեւս քննիրն են այնքան յաջող երգել հայ-

կական եկեղեցին, «բժան Արքագուն Հայրը»:

«Տունը այս բարի, բարակերտ՝
Լոյսի հեղեղ, լոյս զարք,
Բարեղէն գիր, բարէ կամչ:

Տունն այս բարի, սբբատաշ,
Տեղին նիզն է մարմնացած
Բարէ բերվ պարզւած,
Մեր խոյանքն է յաղթապահծ»:

Իր «Ընծայում» քերթւածը, հոգու արիւնով
և նուրբ գգայնութեամբ գրւած իր ամենայաջող
քերթւածներից մէկն է: Երբ հազիւ 14 տարեկան մի
պատահի, նիդրումի ծանր բնուան տակ մտած, փառ
կում է «զոները (իր) աղւոր երազներուն» «որոնք պիտի
չքանային «երկնարնակ էակներու շունչի դիմաց»:

«Պարմանը աղւոր այս որքան շուտ
Նվիրումի նամքուն վրայ,
Պիտի փակէր դոներն աղւոր երազներուն.
• • • • • • • •

Օրերն ազատ, օրերն ուրախ պատանութեան,
Հազիւ ըմպած կարիլ մը շող,
Պիտ մարեկն փականքի տակ
Անգոյն, անզարդ ամայքներուն»:

Իր «Ողջերը» քերթւածը անկարելի է կարդալ
առանց խորը յուղումի: Աւելի հարազատ ու անկեղծ

չէր կարելի արտայայտել իր նամբուրդ որդուն «ողջերը»
թի խօսք առողջ գորովագութ մի մօր ապրումները,
յորդուները, աղօթքը և բարի մաղթանքները:-

— Կերպաս, որդի,
Զգիտեմ ո՞ւր...

Բայց ակամայ շրբներուս ծայր,
Դողդոց ձայնով, զապւած լացով
Կուգայ մաղթանք՝ երբդ բարով,
Երբդ բարով, նամբարդ որդի...

Բանաստեղծը տառապում է հարազատ տան,
անուշ յուշերի, հեռուուր ընկերների, մտերիմների,
Հին երազների եւ քաղցր անցեալի կարօտուկ, եւ ան-
հրապարույր երդիկների տակ զդում է ահաւուր մի մե-
նութիւն, եւ նոյնիակ ճոխ եւ գեղատեսիլ քաղաքների
մէջ իր ականջին հնչում է մի քնքոյշ ձայն, «որ կան-
չում է «Ճուն դարձիր, տուն»: Վիթխարի առանձնու-
թեան մէջ նրա աչքերի առնելու պատկերը» ամ է իր անուշ
հայրենի տունը, «որի կանչի դիմաց նա պատրաստ է
թողնել ամեն բան ու մտնել նրա շեմքից ներս:-

«Կանչիդ դիմաց, տուն իմ աղւոր,
Ես կը բողում փառենը բոլոր
Ու կը հագնիմ հիմ վերարկուն,
Մտերմութեան թելով հիւտած,
Միայն ըլլամ շեմքիդ դիմաց
Ձերմութեանդ հուրով լիցւած»:

Տունը, լոյսը, բարութիւնը մէծ կարեւորութիւն
և նշանակութիւն ունեն աստանողական եւ պանդուխուտ,

Հայրենի տան և ընկերների կուրօտով տառապալով բանաստեղծի համար և կազմում են հիմքն ու առաջձը իր ստեղծագործութեան:

Բանաստեղծին յուսադրո՞ղ, լաւասեսութեան պատճառ տւող ոչինչ ունի մերօրեայ մարդը, որին «նոր մարդիկ» է կոչում նա իր քերթածում. իրենց հոգու ծալքերում ստելաւթեան սերմեր պահած այդ զարդ մարդկանց» քինն ու անտարբերութիւնը միմեանց հանդէպ, «ո համընկնում է դաւադիք ամբոխի չարութեան՝ Աստածորդու ամհանն սիրոյ զիմաց, խոռվեց՝ նուժ է տօնական օրերի գեղեցկութեան, գւարդ եւ բարի լոյսի եւ բարութեան սիրահար բանաստեղծի զգայուն հոգին, որը փնտում է բարութիւնը ամենուր, բայց չի գտնում, նոյնիսկ այնտեղ ուր իր ըսկը դրանայթիւրն է:

«Ես կը փնտում բարութիւնը,
Նրեներս նար են սրբւեր
Պատարագի գոյափոխւած հացգինիով:

• • • • •
Ես չգտայ բարութիւնը
Մարդոց միջեւ,
Տումերս ջերմ անկիւններում:
Զարմանալի,
Բարին նոյնիսկ խորը է հիմա
Իր հարազատ արմատներում»:

Բանաստեղծը իորն ապրումով եւ քնարական նուրբ զդայնութեամբ ու հաւատքով հաստատում է, «ո հին կրակը երբեւէ չի կարող մարել վշտերի մոխրի տակ, եւ ոչ էլ հին օրերի ոտկի յուշերը կարող են մո-

ուացւել օրերի փաշում, միայն թէ, «պէտք է գիտնալ պահը կախարդ», որպէսզի օղակել մինի կեանքի շըլդ թան հին, բայց միշտ նոր յիշատակի վերապրումին: Եւ որքան հմտորէն ու պատկերաւոր ոճով ու անկեղծ ապրումով է ներկայացնում նա այդ հաւատամքը իր «Պէտք է գիտնալ պահը կախարդ» քերթւածում».

«Գիտեմ, աղւորս, պատրանք ես միշտ,
Պաստակին վրայ երազներու:
Մերը կը թիս կրկներթւոյք
Ու կը տանիս հին օրերու
հիմնով լեցուն մեր պահերուն:
Հեռուներէն եկած գու բոց,
Խարութեան մէջ բացւած սրտիս:
Ո՞վ է ըսեր, թէ կը մարի
Կրակը հին, մոխիրին տակ
Յառաջացող մեր վիշտերուն:

«Որեւ գիշերւան մէջ» գրքի խորագիրը կո՞չ
իր քերթւածում, ակնարկում է մի «տարբեր» լոյց
սի մասին, որին «Հոգու արթեւ» է կոչում, եւ որն յորդում է հոգու խորանից եւ փարատում ամենաթանձր յութը, «որին մի ինքնատիպ պատկերով «վորւած աջքի փոսի» է նմանեցնում, եւ որի զիմաց ջահերն անպատ ազօտում են իրենց հզօր լոյսերով».

«Փարած աչքի պէս՝
Գիշերներ կան սպահար,
Ուր ջահերն իսկ կ'աղօւեն
Իրենց հզօր լոյսերով».

Սուլայն, այդ սպահաց գիշեթները, որոնք այս
չաբահօրէն խաւաբակուու մի Հոգեպիճնակ են պար-
զում, ցնողում են, Հոգու խորքից յանկարծ ժայթքած
արեւից:-

Լոյս մը տարբեր կը ծագի
Ի՞ն հոգիիդ խարանէն
Ու կը յորդի բարբուած,
Իրմով ենզի լուսատու.

Գիշերին մէջ դուրս ժայթքած
Արեւն է ան հոգիիդ»:

Եւ ոհա՛, այդ արեւը, այդ տարբեր լոյսն է,
որ ծայրէ - ի - ծայր յուսաւորում է բանաստեղծի
վաստակը: Տեսնում ենք, «ը իր ընտրած թեմաները
աղեքա շրմնեն միայն իր պրոնակիան փոչման հետ, այլ
մարդկային են, համամտորդկային եւ առզային՝ միա
ժամանակ: Նա գիտէ ամփոփւել իր ստեղծած միա-
տիկ մթնոլորտում ու տառապել մարդ - ընկերոջ ճակա
տազրով:

Վերջերս լոյս ընծայած «Ճառագայթը թերան
վրայ» քերթւածների իր երկըորդ ժողովածուի մէջ,
Հեղինակը մէր առջեւ պարզում է աւելի՝ լայն հորի -
զոն, աւելի՝ իսրաթափանց, պատկերաւոր միտք:
Մենք նորից գտնում ենք մեզ լոյսի, արեւի, բարբ-
թեան, ցուրտ եւ մութ Հոգիները ջերմացնող, լուսաւ-
րող ճառագայթների սիրամար, նրանց մաքրութիւնը,
բարութիւնը, գեղեցկութիւնը դրաստող բանապատճե-
ծի առջեւ:



Է՞սի հանդէս բանաստեղծի տածած աէքը այս-
տեղ հանում է այն աստիճանի, «թ նա առնում է արդ
լոյար իր սպիտ մէջ ու «անդում այնպէս ամուլո», «թ
ձուլում է այն իր էտիմոնը ու վորժում է իր մէջ ա-
ճած «պայծառ լոյսի լեզով բացրի» եւ ըմբռուտանում
է «արհեւին դէմ», «թ մարում է (նրա) «աչքերի լոյ-
ուը», ձգելով նրան տառապելու «արեւի տենչով»:

Բանաստեղծի աչքից չեն վրիպում անպատ «առու-
ների պազ առուելուրի մէջ» եւ կամ «մոմերու ծայրին
բռնկող վտիս լոյսերը», որոնցից «միայն կը տարաս
փի կայրութիւնը խաւարի»:

«Մարաւ» եւ «Խուռը» խորադրեալ քերթւածնեւ -
ըս նրա ամենայաջողած կուրներից ենք կարող հա-
մարել: Նրանք համընկնում են իրար, իրենց գեղեցիկ
հակագրւող պատկերներով, անմիջականութեամբ, ըն-
թերցողին իրենց խոհական, խմառուն թախիծով հա-
մակող եւ նորին յոյզով թագթաւուն թեմաներով...»

ԾԱԲԱԿ

Աղրիւրն այնուեղ
Գւարնացիւալ
Ճանանչ հագած
Կը բարախէ.
Տամ նակատներ
Կը յազենան
Պաղ աղրիւրի
Վնիտ ջուրավ:
Ես ունկնդիր

Կարկաչ ձայնին՝
Մարաւ, ծարաւ:

Աղրիւրն այնուեղ,
Փարչը ձեռքին՝
Մարաւ, ծարաւ:

ՆՈՒՌԻՑ

Չեռներուս մէջ նուռ եմ սեղմած
Ու կը նմիւն մասներուս տակ.
Ափերուս մէջ կը բարախէ
Վազքէն յոզեած սրտի նման:

Արինագոյն հիւթը նուռին
Կը կարկըրի դաստակս ի վար,
Մինչ ես այսուեղ, ծարաւ, ծարաւ:

Բանաստեղծը հաւատում է «թ ժամանակը իր
երգը «անի, երազի մարմնացումից պատճառած եր-
ջանկութիւնը՝ մի ուկնթարթ է միայն, իսկ «անիմա-
նալին»՝ լոկ մի երազ:

Բուրք «ւ բարիք, օրհնութիւն տևետող, յոյս
ներշնչող, տաք, մարդարէ ական շնչով ու խորին հա-
ւատքով գրւած մի քերթւած է «Բացէք Դաները», «թը
յանդէրից զուրկ լինելով հանդերձ, օժտւած է հա-
ռուստ ոիթմոցի, «թ հնչում է թմբուկի համաշտի դար-

կերի պէս եւ գեղարւեսուական վայելք պատճառում
բնթերց՞ղին:

«Ճամբորդներ» քերթւածում, բանաստեղծը
պարզում է մեզ իր հաւատոյ հանգանակը, հաւատում
է նա, որ «Լոյսի Ճամբոր» բարձրացող «Ճշմարտու-
թեան ճամբորզներ ենք» մենք, «ւ մեր «Էսութեան աղ-
քատութեան» վրայ կոփելով, բարձրանում ենք արե-
գակի ճամբորներով ու հայցում երկնքների քաղցրու-
թիւնը: Նա հաւատացած է լոյսի յաղթանակին. Հաւ-
մոզւած է, «որ վերջ ի վերջում, լոյսը «կը լայ հետքը
խաւարի», միայն թէ, աւելացնում է նաև բաւատեաօ-
րէն՝ «ըիչ մըն այ հակէ»:

«ԷՇած ծառեր» գեղարւեսուական, ինքնա-
տիպ պատկերներով օժտւած մի քերթւած է, որ փո-
խարերական մաքով, այլաբանօքէն խօսում է շարի
հասունացման մասին, ի բացակայութիւն՝ ստատով,
ուղղիչ, մշակող ձեռքերի, որոնք նմանեցւած են «քուն
մտած ասպետների» եւ «ափայտահատի», որ իր կացի-
նը թողել է մեայ ծառի կողքին ժանգի, մինչ՝ «հին
ծառերու գու թեհրուն չար պարուղներ կը հասունան»:

Փափկացեր են փայտահատի
կաշու ձեռքերը ու ժանգուեր
Սուր կացինը ծառի կաղէին:

Բանաստեղծը կարեկցուին նայում է «կուզ ամ
բոխին» ու արեւ փնտում նրա բութ ուղեղում՝ իր

«Երրորդ աչքով» քերթւածում, «դին «իմաստութեան
բաց աչք» է անսանում: Մարդիկ, զագաթներ նաև -
ճելով հանդերձ, նրա աշքում մնում են պարսատիկի
քարի նժուն «նեսուած մանրիկ քարեր», «որ վեց սլա-
նալով, նորից բնկնում են գետին, «նոր բարձունք-
ներ» նշանակողների իրենց դիմաց:

«Անապատի ձայնը» խորհրդաւուր քերթւածում,
բանաստեղծը խում է լոռութեան հօր ձայնը եւ զգում
արեւ «կրակը թէծ», եւ այդ կրակիչ մթնոլորտում,
կարեկցար լիշում է զրկեալներին եւ յայտնում է
իր ցասումը՝ նրանց չահագողների դէմ:-

Ինցերուն տակ քող կործանին,
Գոշի դառնան զրկեալներու
Ցաւէն շինւած, խուլ մեղքերու
Խսնաչագեղ ապարանքներ:

Եւ, հիսաթափ, կանչում է նաև «Ամենահսկ
րարութեան» թինի վար, դէպի երկիր ու սեսնի թէ
ինչպէս ստեղծագոծութեան «թագ ու պատկ» մար-
զիկ, յանուն սիրոյ եւ բարութեան, արդարութեան,
եղբայրութեան ու խաղաղութեան, կործանում են,
շարչուրում, տանջում ու սպանում «եղբայր մար-
զուն»:

«Անցագիր», «Հող հայրենի», «Ցայտադրիւր -
ներ» եւ «Մատենադարան» խորագրեալ քերթւածները
դրանքուրում են բանաստեղծի կարօտը հայրենի հողի

նկատմամբ, որի մէջ զգում է նու «իսոր ալրմառները
իր էութեան», - նրա հպատականքը, կինաւալարգես-
հողի ու ջրի, ցայտաղբիւրների, հայի ստեղծառզործ
ողու հանդիպ տածած նրա մէջն ու պաշտամունքը:

Բանաստեղծի «Ածու վաքր»ը իր ամենաբար-
ևաստեղծամբան դործերից պիտի համարեց: Խորին ապ-
քումով ու ներշնչմամբ, նորին յոյզերով գրւած մի
իրաւ գեղարւեասական գործ է, «ո համակաւմ է ժար-
դու հազին, հոգատար, ստեղծագործ, կաւուցող,
չինցնող ոգուց բիսող յոյզերով ու զգացումներով:

* * * * *

Արեգակէն ու աստղերէն,
Գարնան բացւող զով զեփիւրէն
Սէր խնդրեցի, որ բալրազի
Ու հասունեայ իմ նոր այգին:

* * * * *

Տանջող, լացող գիշերներէն,
Խինդով բացւող այգաբացէն
Կեանե խնդրեցի, որ չցամֆի,
Չծարաւի իմ նոր այգին:

* * * * *

Եղբակացնմելով մեր խօսքը, պիտի առենք, որ
«Ճառագայթը ինքան մրայ» քերթւածներում տիրաւ-
կոն է խոհը՝ մերւած նուրոր եւ անկիղծ զգացումների
երանգով, լոյսի եւ բարութեան հանդիպ տածած ախ-
րով, մարդասիրութեամբ ու հայրենաւախրութեամբ,
յորդութելով մարդուն միշտ ձգտել դէպի լոյսին ու քա-
րին, աղնիւն ու զեղեցիկը:

Լեզուն պատկերաւոր է, հարուստ: Ինչ խօսք,
որ եթէ խոնարհումների եւ հոլովների վոյսարին առո-
ղավերջերում դործածւած լինէին իսկաւկան յան-
դեր, յատկապիս ույս դէպքում, երբ քերթւածները
գրւած են հաւասար քանակով ոտք ունեցող չափական
տողերով, քերթւածները մեծապէս պիտի շահէիք որո-
պէս բանաստեղծական - գեղարւեատական գործ, հա-
րուստ հնջինականութեամբ:

Խօսքը իսկական, հարուստ յանգերի մասին
լինելով, անմիջապէս ուևլացնենք, որ յանդերը, յաս-
կապէս եղբ քերթւածի առղերը չունեն հաւասար քա-
նակով ոտք, կարող են նաև ներքին լինել - ներքնա-
յանդեր - որոնք ստեղծում են ոիթմ, հաճելի երա-
ժըլականութիւն եւ ընթերցողին մի պահ փրկում են
որոշ դասական, հաւասար ոտքով գրւած քերթւածնե-
րի ոողափերների միուպաղաղ յանգակցութիւնից:

Վերջացնելով մեր ակնաբեկը, մարդում ենք
միշտ գալազ ու բնդուն մնայ Սրբազնն Հօր գրիչը, և
փառս մեր անման մշակոյթի եւ դպրութեան: